

Թիւ 3250  
Ապրիլ 24, 1958

Արժանաշնորհ  
Տ. Խորէն Թհնյ. Մամիկոնեան  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Ս, Համբարձում Եկեղեցւոյ  
Պրիճիորթ.

Սիրելի Տէր Խորէն,

Առաջնորդ Սրբազան Հօր յանձնաքարութեամբ այսու Ձեր  
ուշադրութեան կը յանձնենք, թէ թէ Ձեր պաշտօնագրին համաձայն  
Ձեր ծխական վնտրութիւնը վաւերացուած է, բայց ցարդ Առաջնորդարան  
էք դըկած Ձեր տարեկան ծխական տեղեկագիրը:

Խորին Սրբազնութեան հրահանգն է որ Ձեր ծխական տե-  
ղեկագիրը Առաջնորդարան դրեկը առաջին պատեհութեամբ, քանզի թեմա-  
կան Խորհուրդի համար անհրաժեշտ է իր տրամադրութեան տաէ ունենալ  
թեմի բոլոր եկեղեցիներուն լրիւ ծխական տեղեկագիրները:

Հիայոյս ըլլալով որ սիտի սիրայօժար ընթացք տաք սոյն  
գիմումին, կանխառ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան  
Դիւանապետ Առաջնորդարանի

Սիրելի Տէր Խորէն,

Հաճեցէք ընդունիլ իմ անձնական շնորհակալութիւնը Ձեր ցոյց  
տուած այն հոգածու վերաբերմունքին համար: Հիմա լաւանալու վրայ եմ  
եւ արդէն գործս կը շարունակեմ: